

ԱՐՏԱՍԱՅՄԱՆՆԵԱՆ ՔՐՈՆԻԿ

Կանանց կրթութեան գործը Ամերիկայում: ¹⁾ «Կուպերի» բարձրագոյն ուսումնարանը: «Իրեկեելի ձեմարանը»: Կորնելի և Չիկագոյի համալսարանները: «Մոոր Կոլլեժը»: Տ. Մակ Կահանի կարծիքը ուսում առած ամերիկուհիների մասին: Բուրժուազական կանանց կրթութիւնը Ֆրանսիայում և նրա հետեանքները: Ա. Դիւմալի մի նամակը: Ֆրանսիական պատգամաւորների ժողովը և պատգամաւորական ընտրութիւնների բնաւորութիւնը և եղանակները:

Խօսելով կանանց կրթութեան գործի մասին Ամերիկայում—տիկին Մակ-Կահանը տալիս է հետեւեալ ամփոփ տեղեկութիւնները: Առաջին տեղը իդական ուսումնարաններից պատկանում է Նիւ-Խօրկ քաղաքի «Cooper Union» հաստատութեան: Սրա դռները հաւասարապէս բաց են երկու սեռի համար: Մուտքը ձրի է: Սա հիմնւել է 1857 թ. միլիոնատէր Պիտեր Կուպերի ձեռքով: Շինութիւնը նստել է իրան 630,000 դոլլար ²⁾: Նոյն Պիտեր Կուպերը նւիրել է ալդ հաստատութեան գրադարանին և ընթերցարանին 300,000 դոլլար:

Ներկայումս գրադարանը ունի 20,00 հատոր զանազան հեղինակների, իսկ ընթերցարանը ստանում է 455 պարբերական հրատարակութիւն: Ալցելուների թիւը օրական հասնում է 1,800 հոգու: Նշանաւոր դասախօսներ դասախօսութիւններ են անում ամեն շաբաթ օր: Այս դասախօսութիւնները նմանապէս ձրի են ամենքի համար: Ներքին չարկում մի մեծ դահլիճ նստակցրած է ժողովների, միտինգների համար՝ ալդտեղ ևս մուտքը ձրի է:

Դասաւանդութիւնը տեղի է ունենում երեկոնները: Լսողների թիւը հասնում է 3,000 հոգու՝ երկու սեռի ընդունւում են միալն գրել կարգալ իմացողները և քիչ էլ թւաբանութիւնից: Գիտնական բաժնում դասաւանդւում են՝ մատեմատիկա, ֆիզիկա, քիմիա, մեխանիկա, աստղաբաշխութիւն

¹⁾ «Մուրֆի» №№ 5, 6, 7—8 ալն տեսութիւնները, որոնք կրում էին՝ «Հիււսիւսալիս Միացեալ Նահանգները և ժամանակակից ամերիկացիք» վերնագիրը, — մենք կը շարունակենք մաս-մաս, ներկալի ձևով, ամեն մի «Արտասահմանեան Քրոնիկում»:

²⁾ Դոլլարը=5 Ֆրանկ 40 սանիւմ: Ալժմեան կուրսով մօտ 2 ուրբլի:

և դժագրութիւն: Գրական բաժնում դասաւանդուում են՝ անգլիական գրականութիւնը, ճարտասանութիւնը և բեմբասացութիւն: Կան նաև ձրի դասեր՝ սոպագրութեան, հեռագրութեան և վարժութիւններ սոպագրութեան ղազգեանի վրայ: Առաւուտայ՝ գծագրութեան, քանդակագործութեան և նկարչութեան դասերը ահնայէս են լարմարեցրած որ դասերից լետո իգական սեռը չըղկւի ապրուստի աշխատութիւնից:

Միևնոն հիմունքների վրայ է և Բրուկլին քաղաքի Pratt Institute-ը (հիմնուած 1887 թ.)—բաց 30-ից 60 դոլար տարեկան վճարով: Ընդունուում են՝ 14 տարեկանից ոչ պակաս երկու սեռի ուսանողներ—քննութեան ենթարկելով՝ քերականութիւնից, ազգային պատմութիւնից, աշխարհագրութիւնից, թւաբանութիւնից և ալգեբրայի առաջին մասից: Որպէս զի ամեն ոք կարողանալ ալցեւել իւր ազատ ժամերին՝ դասաւանդութիւնը տեղի է ունենում օրը երեք անգամ՝ առաւօտեան, ճաշին և երեկոյեան: ամեն ոք ազատ է գալ երբ ուզում է: Կան նաև կարճացրած կուրսեր ահնայիսիների համար, որոնք օրումէջ ազատ ժամանակ ունին:

Այս ճեմարանը պարունակում է իւր մէջ նաև մի տեխնիկական զբարոց, որի նպատակը շատ լաւն է. նրանում աւանդուում են թէ գիտութիւններ թէ հասարակ ու գեղեցիկ արհեստներ: Գիտութիւնները, արևստները սրանք են՝ մատեմատիկա, ֆիզիկա, մեխանիկա, խիմիա, նկարչութիւն, գծագրութիւն, քանդակագործութիւն, անգլիերէն լեզու, ճարտասանութիւն և քաղաքացիական իրաւունք: Այս աւանդուում են հաշւապահութիւն և արհեստի դասեր՝ ստաղձագործութեան, դարբնութեան, կար ու ձևի, խոհարարութեան և տնային տնտեսութեան՝ օրիորդների համար:

Ճեմարանը բացի այս տեխնիկական մասերից ունի նաև մասնագիտական բաժիններ գեղարւեստների համար, տնտեսագիտութեան, սղագրութեան և, բացի այս ամենից, պատրաստուում են վարպետ դարբիններ, որմնագիրներ, ստաղձագործներ, կար անողներ, վարպետ խոհարարուներ, շոր լւացողներ, մողիստկաններ և այլն:

Մի նոր բաժին ևս ունի ճեմարանը, ուր պատրաստուում են վարպետ գրադարանապետներ, քանի որ սրանց պահանջը օրէցօր աւելանում է:

Ճեմարանը ունի նաև հողագործութեան և գիւղատնտեսութեան բաժիններ: Ուշք է դարձնուում նաև ալգեգործութեան և ծաղկապահութեան վրայ: Ծաղիկները առհասարակ շատ են ընդունւած և շատ թանգ են վճարուում ¹⁾ Կենդեան տօն օրին 12 վարդի համար Նիու-Իորիում հեշտութեամբ վճարում են 30 դոլար (60 ուլբուլց աւելի):

Ճեմարանը ունի մի ընդարձակ ֆերմա և պահում է օրինակելի անա-

¹⁾ Բարձր շրջանների ամեն մի երիտասարդի համար պարտաւորեցուցիչ է փունջեր առաջարկելը ծանօթ օրիորդներին և տիկիւններին:

սունները կաթնատնտեսութիւնը դործադրուած է գիտնական հիմունքները վրայ: Աշակերտները պատկառով ծանօթ են լինուած բոլոր տնտեսութիւններէ հետ և ամեն մէկը հեշտութեամբ ընտրուած է իւր սրտի ուզածը և ապա կատարելագործուած: Ճեմարանը ունի նաև մի արտասովոր բաժին—խնայողութեան բաժին, որի անունը արդէն բացատրուած է նպատակը: Բոլոր ուսանողները թիւը Պրատտի ճեմարանում հասնում է 3,232: Ճեմարանի վարչութիւնը 1890 թ. դիմեց տպագրած հարցերով ուսանողներին և կողմնակի անձանց ընդունելի և մացցեղի փոփոխութիւնները մասին: Ստացուեցան 556 պատասխաններ, որոնց հետևանքը այն եղաւ՝ որ ճեմարանի վարչութիւնը պայմանաւորեց շատ ֆերմերներին հետ, որ սրանք ձրի՝ բայց կերակրելու պայմանով—վերցնեն իրանց մօտ ճեմարանի սաներին ամառուայ արձակուողներին միջոցին: Սանի պարտաւորութիւնն է այդ դէպքում կատարել գիւղական մշակութիւն: Եթէ երիտասարդ սանը ընտելանում է գիւղական կեանքին և վճռում է ինքն իրան նւիրել այդ գործին՝ նա դիմում է իւր հարեներէ կառավարութեան և հիմնուելով Homestead Law օրէնքի վրայ պահանջում է իւր մշակութեան համար 160 ակր պետական հողերից Արևմուտքում ¹⁾:

Նոյն ուղղութեանն է հետևում 1891 թ. ղեկոնմերին Ֆիլադելֆիայում բացուած Drexel Institute՝ը—բայց աւելի մեծ ծաւալով:

Գրեքսելի ճեմարանի իսկական անունն է՝ Գրեքսելի ճեմարան գեղարվեստի, գիտութեան և արդիւնագործութեան ²⁾: Այս ճեմարանի ղեռնները նմանապէս բաց են երկու սեռի համար, բայց ոչ ձրի՝ այլ թիթե վարձով:

Ճեմարանի շինութիւնը իւր մանրամասներով նտուել է Անտոն Գրեքսելին մօտ կէս միլիոն դոլլար և բացի դրանից հիմնադիրը նւիրել է իւր ճեմարանի պահպանութեանը մի միլիոն դոլլար: Արեւելեան Ամերիկայի հակառակ, Արևմտեանը բացել է իւր բոլոր համալսարանների դռները երկու սեռի համար: Սակայն Արևմտեան Ամերիկայում վերջերս գանգառներ և բողոքներ էին լսուած կանանց համալսարանական իրաւունքները դէմ: Այսպիսի դէպքեր տեղի են ունեցել Միչիգանի համալսարանում և Սան Լուիսի American Medical Colleg՝ում ³⁾: Արեւելեան Ամերիկայի միակ համալսարանը, որ ունի հողագործական բաժին և որի դռները բաց են երկու սեռի համար է, —Cornel University: Սրա մուտքը նմանապէս ձրի է:

¹⁾ Արևմուտք են կոչուած իրանց երկրի արևմտեան մասը:

²⁾ Drexel Institute of Art, Science and Industry.

³⁾ «Ամերիկական բժշկական կոլէջ»:

Մի նոր համալսարան, որ բացելու էր 1892 թ. աշունքին երկու սեռի համար էլ, Չիկագոյի համալսարանն է, որի կառուցանելուն նպաստել են մեծ մասամբ բապտիստները ¹⁾, Ալսպէս I. D. Rockefeller բապտիստը նւիրել է այս համալսարանին 1.600.000 դոլլար, W. B. Ogden մէկը նւիրել է իւր ամբողջ կարողութիւնը, այսինքն մէկ ու կէս միլիոն դոլլար և նւիրել է իւր ամբողջ կարողութեամբ ժողովել է մօտ 600,000 դոլլար, Բապ բացի դրանից ստորագրութեամբ ժողովել է մօտ 21 հոգաբարձու տիստ նւիրողները պայման են դրել որ համալսարանի 21 հոգաբարձուներէն ²⁾ (այսինքն 14 հոգի) լինին բապտիստներէց: Միննոյն ժամանակ նրանք լատարարել են որ համալսարանը իրան հետու պէտք է պահի ամեն մի աղանդատրական ուղղութիւնից և նկատուի միմիայն իբրև մի լուսնայ ամերիկական բապտիստների կողմից:

Այս նոր համալսարանի կառավարիչ Կարպերը մտադիր է ընդունել այն ամենը, ինչ որ նա օրինակելի կը գտնի անգլիական և գերմանական համալսարաններում: Կասախօսութիւնները լինելու են առանց ընդհատուելու ամբողջ տարւոյ ընթացքում: Համալսարանի գրադարանը արդէն ձեռք է բերել 350 հազար հատոր զանազան հեղինակներէ:

Ամերիկացիք թէպէտ հռչակել են իբրև փողատէրներ, բայց նրանք հռչակել են նաև իբրև միլիոնանոց կտակներ անողներ: Միլիոնատէր A. C. Troop-ի միջոցներով է հիմնուած Կոլորադոյի համալսարանը երկու սեռի համար: Սենատոր Ստանֆորդ հիմնել է Կալիֆորնիայում նմանօրինակ մի համալսարան ի վշատակ իւր հանգուցեալ որդու:

Արևմտեան Ամերիկայի գրեթէ բոլոր կոլլեժներում և համալսարաններում իրական սեռը իրաւունք ունի լաճախելու և իրաւաբանական մասը, Իսկապէս աւելի ճիշտ կը լինէր այս մասերը անւանել փաստաբանական, որովհետև իրաւագիտութիւնը, հռովմէական քաղաքացիական իրաւունքները դասաւանդուած են նրանց ոչ իբրև գիտութիւններ, այլ այդ բաժիններում, այսպէս ասած, փաստաբաններ են թխուած, որոնք հէնց համալսարանական նստարանից կարող են իրանց նւիրել այդ արհեստին: Ամբողջ Ամերիկայում կան 7 բժշկական կոլլեժներ (որոնց հիմնադիրներն են կին բժիշկները) և մօտ 50 հաստատութիւններ, ուր իրական սեռի համար դռները բաց են բժշկութիւնը սովորելու:

Բրոքլինում նորերս բացել է «ղեղագործները» մի ուսումնարան: 4 կին և 65 տղամարդ ուսանող են գրւել:

Իրաւագիտութեան կուրսերը հիմնւել են Նիու-Իօրկում միմիայն 3 տարի սրանից առաջ—մասնաւոր կերպով: Դրանց գլուխ բերողը Շւեյցարիայի Բեռն-ի համալսարանը աւարտած ամերիկուհի է միլի Ռեմպլին ³⁾ է:

¹⁾ Սորա հանգուցեալ ամուսինը չալտնի թղթակից էր ամերիկական քաղաքների վերջին ուսուցանական պատերազմի ժամանակ:

որը 17 ուկնդիր ունեցաւ երկու տարի շարունակ իր հիմնած կուրսերում: Ազնուհետե նա կարողացաւ համողել նաև Նիւ-Խորկի համալսարանին ընդունել իւր իրաւարանական մասում նաև իգական սեռը: 1892 թւականին 4 համալսարանաւարտ իրաւարանուհիներ ելան:

Արեւելեան Ամերիկայի միայն երկու քաղաքների ուսումնական հաստատութիւններում՝ իգական սեռը համահաւասար իրաւունքներ է վայելում: Առաջինը արդէն շիշած կտրնելի համալսարանն՝ է և երկրորդը Բոստոնի տեխնոլոգիական ձեմարանը:

Ամերիկական ամենահին համալսարանը՝ Հարւարդին՝ իգական սեռի համար մի առանձնացած և ուրիշ կառավարչի լանձնւած մի բաժին ունի: Կոլումբիայի համալսարանը նմանապէս մի շատուկ բաժին ունի և կանաչքո առանձին տան մէջ են լսում դասախօսութիւնները:

Արեւելեան Ամերիկայում կան մի քանի մասնաւոր իգական կոլէժներ: Սոքա են՝ Bryn Mawr College-ը Ֆիլադելֆիայում, Vassar College-ը Նիւ-Խորկի մօտ և Wellesley College-ը՝ Մասաչուսեթսում: Այս վերջինիս ուսանողուհիների թիւը հասնում է 700, իսկ Vassar College-ում՝ էլ աւելի: Սրանց ծրագիրը ընդհանուր-կրթողական է, ֆիզիկա-մատեմաթիկական, բնագիտական, քաղաքակրթական տնտեսութեան բաժիններով: Ուսանողուհիները անում են գիտնական հետազոտութիւններ, ունին ընկերութիւններ մարմնամարզական և նաւազնացական: Bryn Mawr College-ի համալսարանուհիներ ունին ընդունած համազգեստ նման անդլիական կեմբրիջի համալսարանականները—սև մանտիա և քառանկիւնի գլխարկներ:

Այս հետաքրքրական անդեկութիւնները տալուց վտոյ, տիկին Վ. Մակ կահանը լատնում է իւր սեփական կարծիքը բարձրագոյն ուսում ստացած ամերիկուհիների մասին: Նրա ասելով այդ կանաչքը ժողովրդականութիւն չունին իրանց երկրում: Այս կէտը շատ է բնորոշում ամերիկուհի դուռած՝ ուսւ արիւն ունեցող տիկին Մակ-կահանին, որը վրդովւելով է ասում թէ «ամերիկուհիք զուրկ են ինքնուրոյնութիւնից, թէ նրանք իրանց աչնքան շատ են կարգին պահում—որ մի գուցէ մէկը նրանց բամբասի, որ նրանք խօսում են քաշւելով և շատ կամաց իբրև մի վտանգաւոր հիւանդի սենեակում, որ նրանք աչնպէս են ուս փոխում իբրև թէ ձուաների վրա լինին մանգալիս, կամ թէ տանելիս լինին մի աստաճալին հուր պաշտպանելով սրան ամբոխի շնչումից: «Կապոտ գուլբա» ¹⁾ մականունից վախ կրելով ամերիկուհիները առանձին խնամք են տանում իրանց սոււակտի վրա և աչնու ամենաչնիւ նրանց մօտ երևան չէ գալիս աչն չնորհալիութիւնը, որ շատուկ է բարձր շրջանների կանանց, Գրանք

¹⁾ Ապպէս են կոչում ուսումնական ձեացող կանանց:

մեռում են անզոն իրանց գործունէութեան հետ չնայելով որ ոչինչ չեն խնայում ամեն բարի գործին օգնելու համար»:

* * *

Յրանսիական բուրժուազական իրական կրթութեան մասին մի շատ բնորոշ գաղափար է տալիս հետեւեալ հետաքրքրական ճամակը, որ տպւել էր անցեալները Պարիզի «Ֆիզարո» թերթում և որից քաղում ենք հետեւեալ մի քանի կտորները:

«Ես պատկանում եմ բուրժուազական մի ընտանիքի, որը հոգս է քաշել ինձ մի փալուռն կրթութիւն տալու, բայց որը չպիտի կարողանալ նորն քան մեծահոգի լինել օժիտիս վերաբերմամբս Ոժիտս բաւականին նիհար է: Որովհետև ես գեղեցիկ եմ՝ ուրիշների ասելով, բարի, երաժշտունի, անգղիերէն խօսող, կար անել խմացող, ճաշ պատրաստել զիտցող, տնտեսութիւն անելու ընդունակ—կարճ ասած՝ կատարելագործութիւն մարդու տալու աղջկալ (չնտերս ենք ալպէս), ուստի հէնց որ 18 տարեկան հասակում ուսումն աւարտեցի բարձրագոյն վկայականով—իմ ծնողները ինձ դուրս բերին հասարակութեան մէջ, առանց մի բոպէ անգամ կասկածելու որ ես իսկոյն և եթ պիտի գտնեմ ցանկալի մի ամուսին... Ես ունեցալ ամենամեծ լալոդութիւն պարելով ամբողջ գիշերներ՝ 16—22 տարեկան երիտասարդների հետ, որոնք ինձ հրաշալի էին գտնում,—բայց ես երբէք չպատահեցի իսկապէս ամուսնացողներին, այն է 30—35 տարեկաններին: Ո՛րք են դրանք: Ինձ չկարացին կամ չուզեցին ասել կարճ կտրած—անա ես հասնում եմ գրեթէ քսանիս—ես չունիմ ոչ մի ցանկութիւն ինձ շարունակ ի ցոլց հանելու պատանիների զարճութեան համար, ես բաւականին պար եկալ, ինձ տեսել են, ես չունիմ ամուսին և չպիտի էլ ունենամ մինչև որ չկոլուացնեմ օժիտս! Ի՞նչ անել»:

Ապա, անցնելով այն ասպարէզներին՝ թատրոն, դաստիարակութիւն, առուսուր, բժշկութիւն—ասպարէզներ, որոնք բաց են կնոջ առաջ—համակազիր օրիորդը լատնում է, որ ինքը հակումներ չունի դէպի երաժշտութիւնը և թատրոնը. որ հակառակ իւր կամքին ինքն իրան չի կարող նւիրել բժշկութեան—քանի որ մինչև աւարտելը ինքը կը դառնար 30 և աւելի տարեկան և արդէն թառամած. որ կրթութեան և դաստիարակութեան ասպարէզները լինեն են, իսկ առևտուր անելը անքաղաքավարի է համարում իւր շրջանում:—«Ապա ի՞նչ անել, հարցնում է այս ամենից փտոյ օրիորդը. «Ինձ խորհուրդներ են հարկաւոր ոչ միայն իմ անձիս վերաբերմամբ, այլ նաև իմ 50—80 ընկերուհիներիս համար, ինչ անել սպանելու համար տախտակալի ժամանակը մինչև ակնկալած փեսայի գալը և ի՞նչ միջոցներով խոշորացնել մեր սուղ օժիտները?»

Ով կը կարծէր թէ իրաւ որ մի օրիորդ կարող կը լինէր գրել լրա-

գրում ալպպիսի մի նամակ! Բայց որովհետև անկարելի բան չկալ աշխարհիս երեսին—ալն էլ մեր XIX-րդ դարու վերջերքում, ուստի հասակնք իրականութեան հետ առանց զարմանալու և տեսնենք թէ ինչպիսի պատասխան և խորհուրդներ տւեց նամակագիր օրիորդին Ալեքսանդր Գիւմա որդին,—որը զարմացածների թւումն էր և որից Ֆիզարո'ի խմբադրութիւնը խնդրել էր մի պատասխան իրր մասնագէտից «կանանց խնդրում»: Գիւմալի պատասխանը եղաւ «ամենաթուճորիցը—թերևս ալն պատճառով, որ ինքը զարմացածների թւումն էր»:

Ամենից առաջ նա շնորհիմանում է օրիորդի ապերախտութիւնը զէպի իւր ծնողները—մի վարմունք սակալն, աւելացնում է Գիւման, որը չատուվ է ալնպիսիներին, որոնք զլուսն են պատուում մարդու գնալու Ապա շարունակում ալպէս.

«Տղամարդիկ իսկի ալնքան էլ փմար չեն որքան որ կարծում են կանալք և լաւ փեսացուները իրանց համար կին չեն որոնում ալն ժողովարաններում, ուր ջահիլ օրիորդները պարում են առաջին պատահածի գրկում. ժամանակ առ ժամանակ, շարունակում է Գիւման, կրպատահի որ մի աղքատ օրիորդ, արտակար գեղեցկութեան, աջակցութեամբ իւր աւելի քան խելօք մօրը, կը լաջողի մարդու գնալ մի միլիոնատէրի—սակալն սրանք բացառութիւններ են: Գալով «հիանալի» երիտասարդներին, որոնք հրաշալի կերպով վալս են պարում, իսկ պարերի մէջերքում իրանց «դամա»-ներին սաղպաղակ թ աւաղ ա անում ու հիանում սրանց հագուստի վրալ—ալպպիսի երիտասարդների մասին, պէտք է տեսլ, որ նրանք կողմ նակի կերպով սովորած լինելով—քաջ տեղեակ են լինում թէ ալզ տեսակ հագուստները ինչիւր են նստում դրանց ամուսիններին ու սիրահարներին, ուստի ալզ երիտասարդներն էլ պահանջում են որ ալն մատաղ օրիորդները, որոնք ցանկանալու են նստ ամուսնանալուց չետոլ շարունակել պճնուկ, որ սոքա փող օմիտ բերէին, սրով և կարելի լինէր ձեռք բերել ալզ ամենը: Իսկ ինչ վերաբերում է նրանց, որոնք աշխատում են և կեանքի վրալ լուրջ տեսակէտից են նալում ու իրանց համար որոշած ունին կեանքի մէջ լալտնի նպատակ, —ալպպիսիները իրանց համար կեանքի ընկերուհի չեն որոնում կոտիլոն պարելու...»:

Օրիորդի նամակի երկրորդ կիտին անցնելիս Գիւման գրում է.

«Ալն - ինչ ամենից շատն է սպչեցնում ինձ օրիորդի «նաւատամքի», մէջ, (օրիորդի, որի քսան տարին զեւ չի լրացել)—իւր նշան դասակարգի, հասակի, սեռի—դա ալն բնածին ալհամարանքն է, որ ցալտում է ամեն կողմից լիզականից զէպի արականը: Ա՛յ մի խօսք սիրոլ մասին, անձնւրութեան, համերաշխութեան, լիզէալի մասին: Ա՛յ մի խօսք զոհաբերութեան մասին, որ նա պատրաստ լինէր անել նիւթականից—եթէ որ իրան լաջողէր հանդիպել մի շիտակ մարդու, ո՛չ մի խօսք միջակու-

էք մտածում թէ աշխատանքը վիճակած է լուկ չնչին արարածների համար: Դուք սխալուած էք: Մեր հնացած աշխարհը, որի կարերը բոլորովին քանդուած են, նորից կըստանալ հաստատուն հիմքեր աջակցութեամբ և լոզուտ անպիսիների, որոնք բանում են, աշխատում են: Եւ քանի որ տղամարդիկ աւելի և աւելի խուս են տալիս ամուսնութիւնից և սէրը ստորացնում հասարակ զարեութեան աստիճանի—այս անգամ անօթիտ բուրժուազուհիներին կը մնալ—միանգամայն ձեռք քաշել միլիոնատէրերի կամ ազնւազարմների օրինաւոր ամուսիններ լինելուց ու հաշուել պոռնիկութեան հետ եթէ դէմքով գեղեցիկ էք և ծուլ, կամ որոնել որ և է աշխատանք եթէ խելօք էք և հպարտ: Այլ ևս չոյս միք կապիլ, օրիորդ, տղամարդկանց վրալ—չոյս դրէք միմիայն ձեր անձի վրալ: Ազդպէս միք արհամարիլ գեղարեստը, գիտութիւնը, արդիւնագործութիւնը, վաճառականութիւնը. դրանց մէջ է հասարակութեան հողին ու կեանքը: Փոխ առէք դրանցից մի քիչ ան բանից, որ դրանք տալիս են մեզ, տղամարդկերանցս,—ալսինքն անձնական արժանաւորութիւն, որը ձեզ երբէք չեն կարող փոխարինել ոչ լաթի կտորները, ոչ ձեր զիկոլտէ՛ն, ոչ վախը: Սա կը լինի ամենալաւ միջոցը մարդ գտնելու... Այս պատճառով միք տըքնիլ կոլոլացնելու ձեր օթիտը—շատապահանջ ամուսին գտնելու համար,—այլ աշխատեցէք և էլի աշխատեցէք: Պարապեցէք նկարչութեամբ—Ռոզա Բոնեթի նման, զրականութեամբ—Ժորժ Զանդի նման, դրամատիկական գեղարեստով—Սառա Բերնաուի նման, փիլիսոփայութեամբ—Էլտիզակե նման, թարգմանութիւններով—տիկին Դասիէի նման, արդիւնագործութեամբ—տիկին Էռարի նման, վաճառականութեամբ—տիկին Բուսիկոի նման. գոցէ հեշտ չլինի—սակայն այնքան էլ տաղտկալի չի լինել, որքան անընդհատ մարդ որոնելը և պակաս ստոր—քան անպիսին չգտնելը» !

*
* *

Օգոստոս ամսի 8/20-ին ամբողջ Ֆրանսիայում տեղի ունեցան քէ-արկութիւններ և ապա կրկնաքէարկութիւններ պատգամաւորների ժողովի համար պատգամաւորներ ընտրելու 1893—1897 ժամանակամիջոցի համար:

Ֆրանսիական մեծ լեղափոխութիւնից չետոյ Ֆրանսիան բաժանուած է 86 գեպարտամենտի, որոնցից ամեն մէկը բաժանուած է «աւտոդիսմանների», գաւառակների: Ամեն մի 100,000 բնակիչ ունեցող գաւառակ ընտրում է մի պատգամաւոր: Բնակիչների աճումի հետ աճում է և պատգամաւորների թիւը: 1885 թ. պատգամաւորների թիւն էր 576, իսկ ներկայ թւականին 581, քանի որ հինգ գաւառակների բնակիչների թիւը աւելացել էր 500,000-ով:

Ոչ մի պատգամաւոր չի ընտրուում մեն մենակ. այլ անպատճառ պատ-

կանոս է եղած քաղաքական կուսակցութիւններից մէկին: Իսկ եթէ ստեղծուում է մի նոր կուսակցութիւն—մի նոր մարդու ուղղութեան անուշով—պատգամաւորը ընտրուում է այդ իսկ թույլ, սակաւաթիւ կուսակցութեան անունից:

Ոչ մի երկրում կուսակցութիւնների թիւը աճեցան մեծ չէ, որքան Ֆրանսիաում—մի երկրում, որը ունեցել է մեծ պատմութիւն և ուր կուսակցութիւնների իրար հետ ունեցած կռիւնները դառել են առասպելական: Եւ սակաւն—ամեն անգամ երբ գործը հասնում է մի ընդհանուր թշնամու հարածելուն՝ բոլոր կուսակցութիւնները իսկոյն միանում են իրանց հայրենիքի ազատութեան սուրբ գործում: Մի նորագոյն օրինակ կուսակցութիւնների օրինակելի միաձայնութեան կարող է լինել այն ոգևորած ընդունելութիւնը, որ Ֆրանսիացի քանուս են այս օրերս իրանց քաղաքական դաշնակցին—Ռուսիային—լանձին ուսաց նաւատորմիդ:

Սակաւն չընդենք և՛ մասնաւորապէս ներկայ ընտրութիւններին անցնելուց առանջ—մի գաղափար տանք Ֆրանսիական այս ընտրութիւնների բնաւորութեան և եղանակների մասին ընդհանրապէս:

Ամենամեծ դերը ընտրութեան գործում կատարում է տպած թուղթը, որը զանազան լատարարութիւնների, ազդերի ձևերով կպցնում են սովորական լատարարութիւններին չտակացրած սիւներին, մասնաւոր, հասարակական և պետական շինութիւնների պատերին, իսկ ընտրութեան օրը նաև լուչարձաններին, ծառերի ճիւղերին և բուններին, հասարակական շինութիւնների սանդուխքներին և նոյն իսկ սալալատակին:

Այդ օրը պէտք է Պարիզում լինել ու տեսնել գոյն-գոյն այդ թղթերի հարիւրհազար օրինակները!

Թէև ըստ Ֆրանսիական օրէնքի արգելուում է լատարարութիւններ կպցնելը մասնաւոր տների պատերին և մինչև անգամ տնատէրերը չիչեցնում և զգուշացնում էլ են ում հարկն է՝ դեֆանս դ'աֆֆիլչէ՝¹⁾ մակագրութիւններով—իրանց տների պատերի վրայ—աչնուամենայնիւ կպցնողը անում է իւր գործը և տնատէրը երբէք չի դիմում օրէնքի օգնութեան բաւականութիւն ստանալու համար:

Պատգամաւորների լատարարութիւնները պիտի լինին գոյնաւոր, իսկ սպիտակ թուղթը վերապահւած է միմիայն պետութեան: Օրէնքի պաշտպանութիւնը վախելում են նմանապէս եկեղեցիները և լուչարձանները բաց եթէ ոստիկանութիւնը քնած է լինում—արձաններն էլ են ծածկուում պատգամաւորական լատարարութիւններով, օրինակ այս տարի Վոլտերի կիսարձանին կպցրել էին մի կղերական պատգամաւորի լատարարութիւն:

¹⁾ «Արգելւած է աֆիշաներ կպցնելը»:

Այդ լատարարութիւնները լինում են զանազան ձևերի Ամենից առաջ կայցնւում է 60 սանտիմէտր երկարութիւն և 20 սանտ. լայնութիւն ունեցող լատարարութիւնը՝ 10—15,000 թւով որը պարունակում է միայն թիկնածւի անունը և սրա որ կուսակցութեան պատկանելը։ Երկրորդ տեղը ըստ ժամանակագրականի բռնում է աւելի մեծ լատարարութիւնը, այն է 80 սանտիմէտր երկարութիւն և 30 սանտ. լայնութիւն ունեցողը, որը հանդէս է գալիս—երբ առաջին կարգինը անընթեռնելի է լինում շնորհիւ հակառակորդի վրան կայցրած աֆիշաների։ Ապա գալիս են հրաւիրաթղթեր—ժողովներին ներկայ լինելու, թող սրանց թիւն էլ լինի մի 15,000 հատ։ Ապա գալիս է մի չորրորդ տպագրութիւն՝ 60 սանտ. երկարութեամբ և 80 սանտ. լայնութեամբ, որը պարունակում է թիկնածւի ծրագիրը, դաւանանքը և խոստումները։ Եւ եթէ այս բոլոր տպուղ և ցրուող թերթերին աւելացնենք և թիկնածու պատգամաւորի պատասխանները, իբր «դրպատողների հասցէին», բաց իսկապէս ուկլամի համար թխւած բացատրութիւնները,—այն ժամանակ միայն գէթ կարելի կը լինի մի գաղափար կազմել գործածող թղթի քանակութեան և տպարանների ունեցած գործի մասին։

Բացի այս տպած թղթերից, տպարանից, ցրուողներից—թիկնածու պատգամաւորը, որը անպատճառ ուզում է ընտրւած լինել—ստիպւած է զինել և գործ ունենալ հազար ու մի այլ տեսակի մարդկանց հետ, մարդկանց, որոնցից ամեն մէկը իրա համար մի մասն է ընտրել—իբր մասնա, գիտութիւն—ընտրողական բարդ գործից։

Եւ իրաւ ահա թէ հերթով ուղքեր են ներկայանում թիկնածու պատգամաւորին։

Քրոջը, որը գլուխ է անցնում մի թերթի (ի հարկէ 'ի հաշիւ թիկնածու պատգամաւորի), մի թերթի, որը ընդ ամենը մօտ մի ամիս միայն պիտի գոյութիւն ունենայ և խիստ լօգւածների հետ ի պաշտպանութիւն և ջատագովութիւն թիկնածւի՝ պարունակի նաև խիստ լարձակումներ և հարւածներ աջ ու ձախ եղած հակառակորդների հասցէին։

Թիկնածուի քարտուղարը, որը բնակութիւն է հաստատում կուրի դաշտում, այսինքն ալնտեղ ուր կատարւելու է պատգամաւորական ընտրութիւնը։ Քարտուղարը աշխատում է անձնւիրաբար, օրն ի բուն մաշում փողոցները, շարունակ լաճախում սյ ճատներ, ճաշարաններ, որոնում և գրտնում բարեկամներ, որոնց ուտեցնում է, խմեցնում է և նոյն իսկ փող տանու տալիս թղթի, դոմինուի մէջ և այլ խաղերում։ Ներկայ է լինում ժողովներում, ուր առաջարկում է նպաստաւոր բանաձևեր իւր «տիրոջ» համար, գրում հասցնում նկատողութիւններ լրագրերին և այլն։

Մասի ահա քրոջը, որի դերը նրանում է կայանում, որ կարելին չափ շատ ծափահարի իւր «տիրոջ»—սրա ճառեր արտասանելու ժամանակը

ընդմիջելով նրա ամեն մի նախադասութիւնը՝ կեցցես բացականչութիւններով:

Շւացնողը—կատարում է ծափահարողի հակառակ դերը, այսինքն շւացնում է իւր «տիրոջ» հակառակորդների արտասանած ճառերի ժամանակ, իւր տիրոջ թեկնածութեան անշղոթութեան դէպքերում—աղմուկ հանելով բանը հասցնում է անկարգութիւններին և նիստը փակել տալիս:

Ճանապարհ գցողը, որի արհեստը և դերը այն է որ ճանապարհ գցի իւր թեկնածու պատգամաւորին ժողովատեղերից տուն, ճուն հասնելուն պէս—ճանապարհ գցողը այնքան կեցցէ է կոչում, որ իւր «տէրը» բարեհաճում է դուրս գալ պատշգամբ և մի նոր ճառ արտասանել հաւաքած ամբոխին: Նույն ճանապարհ գցողը բարձրագոյ կերպով զանազան վիրաւորիչ մականուններ է կպցնում իւր «տիրոջ» հակառակորդին:

Ճառախօսները, որոնք առաջարկում են իրանց ծառայութիւնները այն դէպքերում, երբ թեկնածու պատգամաւորը զուրկ է լինում ճառախօսական ընդունակութիւնից: Սրանք լինում են դերասաններ, արտասանելով անգիր արած ճոճաւան խօսքեր—սրանք հիացմունքի մէջ են գցում ունկնդիր ամբոխին:

Գրադարանի մուկը, որը գրադարաններ քրքրելուց լետոյ ներկայանում է պատգամաւորին այն խալտառակիչ և արատաւորող տեղեկութիւններով, որոնք սոււեր են գցում թեկնածուի ծնողների վրայ Նթէ թեկնածու պատգամաւորը մերժում է ձեռք բերել այդ գրադարանական միան լուսթիւնը—այպա նույն տեղեկութիւնները տանւում են միան ձեռքերով—պատգամաւորի հակառակորդի մօտ, որը ի հարկէ կը գնի այդ տեղեկութիւնները:

Աջուհետև առաջ են գալիս—քաղաքաչին վարչութեան քարտուղարը—որը թեկնածու պատգամաւորին տալիս է ընտրողների անունները և հասցէները, անպաշտօն վարժապետը—որը լանձն է առնում ծախել չըջարեականները և նրանց վրա հասցէներ գրելը, աղքատը—որին լանձնում են այդ չըջարեականների ցրելը, փողոցաչին երգիչը—որը երգեր կը խօսի ի փառաբանութիւն թեկնածու պատգամաւորին, ընտրողական թերթիկների ցրելիչը, որը կանգնած է լինելու այն դռան շէմքին, ուր կատարւելու են ընտրութիւնները, վերահսկողը, որը աչք է պահում ընտրութիւնների կանոնաւորութեանը կամ անկանոնութեանը, և վերջապէս—չաղթանակի մարդիկ—որոնք նոր թխած պատգամաւորին ձեռքերի վրա տանում են մօտակալ սրճատունը:

Միջին թուով թեկնածու պատգամաւորի արած ծախքերը հասնում են 15—18.000 Ֆրանկի, ասել է մօտաւորապէս պատգամաւորութեան երկու տարւակ առճիկը:

Այն էլ պէտք է ասել, որ Պարիզի իրա մէջ ընտրութեան վրա եղած

ծախքերը պակաս են քան գաւառում: Պարիզում ընտրելու համար ամենակարևորը է լուսավի ընտրողական կոմիտեի աջակցութեան ձեռք բերելը: Այս դէպքում բոլոր հոգսերը ընկնում են կոմիտեի վրա:

Աւելի դժար է գաւառներում ընտրելը, ալտինքն գիւղերում և գիւղաքաղաքներում, ուր ընտրողները չեն ժողոված մի տեղ, ինչպէս Պարիզում, այլ փռած են ընտրութեան տեղի շրջակաքում:

Գաւառական թեկնածուի գործը աւելի ծանր է և ընտրած լինելու համար—նա պէտք է ծանօթներ, ազգականներուն նախըւր գաւառում: Ամենից առաջ թեկնածուն պարտական է չալտնել ոստիկանութեան իւր թեկնածուութեան մասին—հակառակ դէպքում նա ենթարկուած է 10.000 ֆր. տուգանքի: Եւ ապա նա սկսում է իւր արշաւանքը ընտրող ձայների կտրից՝ չաճախելով տօնավաճառները, հրապարակները, ուր որ լոյս ունի ձայների ձեռք բերելու Թեկնածու պատգամաւորը հետը բերած է ունենում Պարիզից... սիգարներ և մեծ-մեծ խոստումներ, որ նա անխտիր բաժանում է աջ ու ձախ իւր ընտրողներին—տալով նաև զանազան մեկնութիւններ թէ ինչու չաջողեցան իւր պա ինչ պէ ինչ առաջարկները պատգամաւորների ժողովում: Եթէ նա հին պատգամաւոր է, արդէն գիտէ թէ որոնք են հեղինակաւոր և ազդեցիկ ընտրողները իւր շրջանում, ուստի նա շտապում է ամենից առաջ ալցելութիւններ անել ակադիսիներին, սեղմել ամենաէկի ձեռքը, «մոն շեր ամի» ասել ամեն մէկին, պատ մելով իւր ջանքերի, արած քալերի, արտասանած ճառերի, գրած լողւածներին մասին, ընդ ամին մի քանի փաղաքական խօսքեր ասելով իւր ամեն մի «կարևոր» ունկնդրին: Սրանց թուումն են. տեղական մէրը՝ սրա օգնականները, բժիշկը, նոտարը, դատաւորը, գիւղատնտեսը, կապալառուն, ուսուցիչը, քահանան և ալն: Թեկնածուն, եթէ մասնագէտ է—չի խնայում իւր մասնագիտական խորհուրդները: Եթէ նա բժիշկ է՝ իւր խորհուրդների հետ և ձրի դեղորայք: Եթէ նա փաստաբան է, գիւղատնտես է—նմանապէս ձրի խորհուրդներ ամեն մի տեղական խնդրի վերաբերմամբ, որ և խոստանում է պաշտպանել պատգամաւորների ժողովում: Բացի մասնաւոր ալցելութիւններից և հրապարակական ժողովներից—թեկնածուն չալտնում է և սրճատանը և գինետանը, և ալ տեղերում ներկայ եղողները նրա հաշուով անուշ են անում գինի, արսենթ, ամեր ¹⁾ պիլոն, գարեջուր, սուրճ և ալ «կոնսոմասիոններ», իսկ ինքը թեկնածուն ճառեր է արտասանում, զրոյցներ անում:

Շատ չաճախ պատահում է, որ հրապարակական ժողովներին մասնակցում են երկու հակառակ թեկնածուներ. պատերազմը սկսում է թեկնածուներից մինի ճառով, որով պատգամաւոր թեկնածուն աշխատում է

¹⁾ Ֆրանսիացում գործածուող ըմպելիներ.

պարզել և պաշտպանել իւր ծրագիրը: Ապա խօսում է հակառակորդը: Շատ լաճախ վիճաբանութիւնները արնքան են տաքանում, ներկայ հասարակութիւնը արնքան է գրգռում, որ բանը հասնում է տուր ու զմբռցին և նորն իսկ արիւնհեղութեան:

Ներկայ կուսակցութիւններից ամենախուժարարները—ընկերվարականներն են: Բաւական է, որ մէկը ընդդէմ լինի որանց կարծիքներին, ահա գործ է սկսում տեսնել բուռնցքը. ժողովում լսելի են դառնում ա լօ, ա լա լանտերն! (Չուրը գցել կախել դրան): Այժմ թեկնածուն հեռատես չէ լինում և զգուշարար նահանջի ճանապարհ չի լինում պատրաստած կարող է իւր կեանքը նաև վտանգի ենթարկած լինել:

Ներկայ ընտրութիւնների ժամանակ ալտայիսի դուրթեան մէջ էր նախկին մինիստր Լու Վիւլօն, շնայած որ մասնաւոր ժողովին հրաւիրած էին միայն հրաւիրագրերով: Նրա մի գիրքը ընդդէմ «ընկերվարականների բռնարարութեան» դրաւել էր վերջիններիս ուշադրութիւնը, որոնք և ներս էին խծկել կեղծած հրաւիրագրերի օգնութեամբ, շնորհիւ իրանց ընկերակից Ալեքսանին, որը վարպետութեամբ կեղծել էր հրաւիրագրերը իրա սեփական տպարանում:

Մի ուրիշ դէպք, բաց աւելի վատ հետեանքով, պատահեց ընկերվարական Մոժանի անձի հետ: Սափրիչների դաշնակցութիւնը, (որը վերը պատմած խաղը խաղաց Վիւլօնի գլխին) չգոհացաւ շրջաներով վարձատրել Մոժանին, այլ և վէրք հասցրեց նրան, իսկ պատճառը—պատճառը արն էր որ Մոժանը հարուստ է և սեփական տներ ունի—թէն ընկերվարական է և մի ընկերվարական թերթ էլ է հրատարակում Վերմինալ անունով—կոմունալի նախկին գեներալի Գրուտէի հետ:

Մինչև ներկայ տարին, ամեն անգամ նմանօրինակ ընտրութիւնների ժամանակ, բոլոր գոյների հանրապետականները ընդհանուր ժողովներ էին ունենում և համաձայնութիւն կալացնում իրար քէ տալու հակահանրապետական և այլ թեկնածուների դէմ: Միմիայն այս տարի էր, որ հանրապետականները այլ ևս ոչ մի վախ չունենալով ուրիշ կուսակցութիւններից—ընտրութիւնը թողել էին ազատ մրցութեան:

Ահա նրանք չախալեցին իրանց հաշիւների մէջ:

Քէարկութիւնների հետեանքների մասին խօսել է «Մուրճի» անցեալ № 7—8 Քաղաքական բաժնում: